

Արձանագրություն թիվ 10

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,
կայացած 2019թ հունիսի 17-ին

- Օրակարգը՝
1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի ընտրություն
 2. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2018-19 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
 3. ֆակուլտետի ՈւԳԸ և ՈւԽ նախագահների հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
 4. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր- Տ.Վ.Ղոչիկյան

Ներկայացնեմ Քիմիայի ֆակուլտետի Գիտխորհրդի թիվ 10 նիստի օրակարգը, 16 անդամներից ներկա են 14-ը՝ հետևաբար քվորում կա: Վերոնշյալ օրակարգը հաստատելուց հետո անցնենք աշխատանքի:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Անցնենք օրակարգին. Ֆիզ-կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի ժամկետի լրանալու կապակցությամբ հայտարարվել է մրցույթ: Մրցույթին դիմել է մեկ անձ՝ Շիրազ Ալեքսանդրի Մարգարյանը և ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը: Մրցութային հանձնաժողովը և ամբիոնը երաշխավորել են Շ.Ա.Մարգարյանի թեկնածությունը: Բոլորս ճանաչում ենք Շ.Մարգարյանին ծանոթ ենք նրա գիտամանկավարժական գործունեությանը. վերջին 5 տարում գիտական գործունեության արդյունքում նա հրատարակել է 18 գիտական աշխատանք(հիմնականում արտերկրում), 1- ուսումնամեթոդական ձեռնարկ և մի շարք միջազգային թեզիսներ: Ըստ գործընթացի պետք է կազմել հանձնաժողով՝ նախագահ և 2 անդամ: Առաջադրեք թեկնածուներ: Միաձայն քվեարկության արդյունքում.

նախագահ ընտրվեց – Հ.Գ.Խաչատրյանը,

անդամներ՝ -Ա.Ս.Գալստյանը և Շ.Վարդանյանը(ՈւԳԸ-նախագահ):

Իրականացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Քվեարկության արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ.Գ.Խաչատրյանը

- Քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 16 անդամներից 14-ը հետևաբար մնացել է 2 չքվեարկած թերթիկ, անվավեր քվեաթերթիկ չկա:
- Այսպիսով

Շ.Ա.Մարգարյանի թեկնածության համար՝ կողմ -14 , դեմ չկա:

Տ.Վ.Ղոչիկյան – հաստատենք չ/չ հաշվետվությունը: Միաձայն հաստատեցին չ/չ հաշվետվությունը:

2. Տ.Վ.Ղոչիկյան – ըստ 2-րդ կետի պետք է լսենք Ֆիզիկական և կոլեկտիվ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2018-2019թթ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Շ.Ա.Մարգարյան- Հաշվետվությունը կցվում է:

3. Պետք է լսենք ՈւԽ –ի նախագահ Անահիտ Բրուտյանի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ա.Բրուտյան – Հաշվետու տարում իրականացրել ենք 10 միջոցառում որից 3 գիտական, 3-ժամանցային, 3 –այցելություններ և 1 բարեգործական ծրագիր է և իրականացվելու է 19.06.2019թ : ԵՊՀ –ի ՈւԽ-ի նիստի ժամանակ տարվա լավագույն ՈւԽ ծրագրում զբաղեցրեցինք 2-րդ դիրքը զիջելով Իրավագիտության ֆակուլտետին միայն մեկ միջոցառմամբ: Իրականացրել ենք նաև կադրային փոփոխություններ, ընտրելով 1-ին,2-րդ կուրսի ուսանողների: Աշխատանքները ՈւԽ –ում շարունակվելու են անգամ ամառային արձակուրդների ընթացքում, իսկ օգոստոսին մագիստրատուրայի առաջին կուրսից կընտրեն կուրատոր, ով կօգնի առաջին կուրսեցիներին ինտեգրվելու համակարգ: ՈւԽ Նախագահին հարցեր ուղղեց դոցենտ Ռ.Պ.Մխիթարյանը

1. Բարեգործական ծրագրի համար ընտրված ընտանիքը ինչպես էք ընտրել.

-Ընտանիքը անձանոթ էր: Սոց կայքից մայրն էր խնդրել մեր օգնությունը: Նա միայնակ մայր է 26 տարեկան, ունի մեկ տղա 2.5-տարեկան: Մենք ուս խորհրդից գնացինք նրանց կացարան: Շատ վատ վիճակում էին և որոշել ենք օգնել սնունդով, հագուստով, եթե ցանկություն ունեք դուք էլ կարող եք միանալ մեր նախաձեռնությանը:

2.Ինչ է անում ՈւԽ վատ առաջադիմությամբ ուսանողների համար:

- Գիտեք մենք կազմակերպել էին պիլոտային ծրագիր մասնավորապես օրգանական քիմիա առարկայից: Ցանկացողները շատ էին, գրանցվեցին, բայց երբ եկավ հանդիպելու և քննարկելու օրը այդ նույն ուսանողները չներկայացան: Չեմ կարող բացատրել երևույթը:

3. ՈւԳԸ նախագահ- Շուշաննա Վարդանյան

Հաշվետու տարին ՈԻԳԸ-ի համար շատ լարված տարի էր: Երկրորդ կիսամյակում խիստ ծանրաբեռնված էինք դասերով, բայց հասցրել ենք իրականացնել մի շարք միջոցառումներ:

1. Իրականացրել ենք միջոցառում “Քիմիան” բնագիտական ֆակուլտետների համար՝ աշխարհագրություն, ֆիզիկա, կենսաբանություն:

2. Իրականացրել ենք քիմիայի փորձեր մի շարք դպրոցների աշակերտների համար, անգամ վերջերս քիմիական փորձերին մասնակցեցին կրտսեր դպրոցի աշակերտները:

3. Համամալսարանական օլիմպիադա “Քիմիա” առարկայից ուսանողների համար: Տ.Վ.Ղոչիկյան – Ես հետևում եմ և՛ ՈԻԽ-ի, և՛ ՈԻԳԸ-ի աշխատանքները: Սկզբունքորեն մեծ աշխատանք են կատարում այս ուսանողները: Առաջարկում եմ գնահատել այս երկու կառույցների աշխատանքը:

Գիտխորհուրդը բավարար գնահատեց Քիմիայի ֆակուլտետի ՈԻԽ-ի, ՈԻԳԸ-ի աշխատանքները:

4. Ընթացիկ հարցեր

Ա) Գործարկվել է փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը: Ըստ ռեկտորատի ծանուցման դեկանների տեղակալները և կենտրոնների տնօրենների տեղակալները 1օրյա դասընթացի պետք է մասնակցեն, որը տեղի կունենա 19.06.2019թ-ին 10:30 նիստերի դահլիճում:: Քիմիայի ֆակուլտետից առաջարկվում է

դեկանի տեղակալ Ա.Ս.Գալստյանը

Էկոլոգիայի կենտրոնից Լիանա Մարգարյանը:

բ) Հարգելի գործընկերներ հունիսի 25 –ին, 14:30-ին տեղի կունենա Քիմիայի ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների հանձնաման արարողությունը:

Գիտխորհրդի նախագահ

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր

Քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղոչիկյան

Մ.Ա.Սամվելյան